# «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի $311^{2}$ -րդ հոդվածում՝

1) վերնագրից «շահադիտական նպատակով» բառերը հանել.

2) 1-ին մասում «շահադիտական նպատակով» բառերը փոխարինել «շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով» բառերով, իսկ «միջնորդի միջոցով» բառերից հետո լրացնել «իր կամ այլ անձի համար» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 1-ից: